

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ

Այսօր, ինչպես հասարակության բոլոր բնագավառներում, այնպես էլ կրթության ոլորտում տեղի են ունենում արմատական բարեփոխումներ, որոնց համար պարտադիր են կրթական համակարգի որակի ապահովման վերահսկողությունը և գնահատումը:

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտը (այսուհետ՝ ՀՖԿՍՊԻ կամ Ինստիտուտ) ստեղծման պահից հետամուտ է եղել կրթության որակի ապահովմանը (այսուհետ՝ ՈԱ), իսկ գործող որակի ապահովման բաժինը՝ համաձայն ՀՖԿՍՊԻ-ի ռազմավարական պլանում (2016-2020) նկարագրված նպատակների, նախատեսված է որակի ապահովման համակարգի ներդրման և զարգացման, որակի մշակույթի տարածման և շարունակական բարելավմանն ուղղված գործողությունների իրականացման համար:

ՀՖԿՍՊԻ-ը ՈԱ-ն գործընթացներում և ընթացակարգերում առաջնորդվում է.

- ✚ «Կրթության մասին» ՀՀ օրենքով:
- ✚ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքով:
- ✚ ՀՖԿՍՊԻ-ի կանոնադրությամբ և զարգացման ռազմավարության սկզբունքներով:
- ✚ Որակի ապահովման եվրոպական և ազգային չափանիշներով և չափորոշիչներով:
- ✚ ՀՀ-ում մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների հավատարմագրման կարգով:

Որակի ներքին ապահովման քաղաքականությունը ՀՖԿՍՊԻ-ի նպատակների, խնդիրների, ինչպես նաև ռազմավարական սկզբունքների և արժեքների հոչակագիրն է կրթության որակի բնագավառում: Կրթության որակի ներքին ապահովումը ՀՖԿՍՊԻ-ի ծրագրային առաջնայնությունների օրակարգում է, որը մասնագիտական կրթության զարգացման և անհրաժեշտ գիտելիքների ստեղծման, փոխանցման և տարածման հիմնասյուններից է:

2. ՈՐԱԿԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՈՒՆԸ ՀՖԿՍՊԻ-ՈՒՄ

Կրթական համակարգում որակի հասկացության համար ընդունված տարբեր մոտեցումներից ՀՖԿՍՊԻ-ն առաջնորդվում է «**համապատասխանություն նպատակին**» սկզբունքով, որն ընդգծում է բոլոր շահակիցների կողմից ընդունված չափանիշներին համապատասխանելու անհրաժեշտությունը: Սկզբունքի կիրառման հիմքում ընկած է Ինստիտուտի կամ նրա կրթական ծրագրերի նպատակների իրականացմանը ուղղված գործողությունների արդյունավետությունը: Որակի այսպիսի սահմանման հիմնական ուղղորդիչներն են ՀՖԿՍՊԻ-ի առաքելությունը, ռազմավարական նպատակները և խնդիրները, ինչպես նաև գործունեության տարբեր ոլորտների համար հաստատության հրապարակված հավակնությունները:

3. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Որակի ապահովման քաղաքականության նպատակն է բարձրացնել ՀՖԿՍՊԻ-ի ուսումնական և հետազոտական աշխատանքների, հասարակությանը մատուցվող ծառայությունների որակը և կառավարման գործընթացների արդյունավետությունը՝ դրանք համապատասխանեցնելով ներքին և արտաքին շահակիցների կարիքներին:

4. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ՀՖԿՍՊԻ-ի Որակի ներքին ապահովման քաղաքականության հիմնական խնդիրներն են.

1. Նպաստել Ինստիտուտի առաքելությանը համապատասխան ռազմավարական նպատակների և խնդիրների արդյունավետ իրականացմանը:

2. Պահպանել որակի ապահովման միասնական սկզբունքները, ներդաշնակեցնել և իրականացնել ՈԱ գործընթացներ ՀՖԿՍՊԻ-ի գործունեության բոլոր հիմնական ոլորտներում:

3. Բոլոր շահակիցներին տրամադրել ուղենիշներ որակի ներքին ապահովման գործընթացների և ընթացակարգերի մշակման և իրականացման համար, շահակիցներին ներգրավել որակի ապահովման գործընթացներում:

4. Նպաստել որակի շարունակական բարելավման մշակույթի ձևավորմանը ու հետագա զարգացմանը, ապահովել որակի մշակույթի ներդրման նախադրյալներ:

5. Ամրապնդել ՈԱ բաժնի դերը որակի ապահովման և կառավարման հարցերում:

6. Ստեղծել կանոնակարգային և տեղեկատվական հենք ՀՖԿՍՊԻ-ի գործունեության, նրա կրթական ծրագրերի որակի արտաքին գնահատման և հավատարմագրման համար:

7. Պարբերական վերանայումների միջոցով շարունակաբար բարելավել ՈԱ համակարգը, կատարելագործել և արդիականացնել ՈԱ գործառույթները, ընթացակարգերը, չափանիշները և դրանց հետ առնչվող պաշտոնական փաստաթղթերը:

8. Ազգային ու միջազգային ՈԱ գործակալությունների և այլ բուհերի ՈԱ բաժինների հետ կապեր հաստատել և ամրապնդել:

5. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԻՐԱԳՈՐԾՈՒՄԸ

ՀՖԿՍՊԻ-ն ՈԱ-ն իր գործընթացներում առաջնորդվում է հետևյալ սկզբունքներով.

- + Նպատակային.** Ինստիտուտում բոլոր գործընթացները և աշխատանքները իրականացվում են՝ համաձայն ՀՖԿՍՊԻ-ի առաքելությանը և ռազմավարությանը:
- + Շարունակական զարգացում.** ՀՖԿՍՊԻ-ն խթանում է պրոֆեսորադասախոսական և վարչական համակազմի մասնագիտական որակավորումների և կարողությունների աճը՝ մասնագիտական բնագավառում շարունակական կատարելագործման և դրանք կառավարելու նպատակով:
- + Ուսումնական և կառավարման գործընթացների բարելավում.** ՀՖԿՍՊԻ-ում որակի ապահովման համակարգը, ընթացակարգերը և գործընթացները ուղղված են ֆիզիկական կուլտուրայի, ֆիզիկական վերականգնողական, մանկավարժական, հոգեբանական և մասնագիտական կրթության ոլորտում ուսումնական և հետազոտական գործընթացների կազմակերպման, դրանց բովանդակության, ինչպես նաև տրամադրվող ծառայությունների և կառավարման համակարգի որակի բարելավմանը:
- + Հիմնավորված.** Որակի ներքին ապահովման գործընթացների բարելավումը հիմնված է իրական փաստերով, գործառնական հավաստի տվյալների հավաքման և վերլուծման միջոցով:
- + Գիտական, հետազոտական և դասավանդման գործընթացներ.** ՀՖԿՍՊԻ-ի պրոֆեսորադասախոսական և ուսումնասօժանդակ համակազմը, անշահախնդիր համագործակցելով իր ուսանողների հետ, որպես գիտելիք ստեղծող և զարգացնող հանրություն, հետադարձ կապի շնորհիվ՝ ապահովում է մասնագիտական ոլորտում հետազոտությունների ինտեգրումը ուսումնական գործընթացին:

✚ **Հստակ ձևակերպված.** Որակի ապահովման խնդիրները, ինչպես նաև դրանց հասնելու ուղիները, ընթացակարգերը և միջոցները ձևակերպված են հստակ, շոշափելի, իրագործելի տվյալ աշխատանքների համար նախատեսված խելամիտ ժամկետներում:

✚ **Թիմային մոտեցում.** ՀՖԿՍՊԻ-ը, լինելով սպորտային բարձրագույն ուսումնական հաստատություն, յուրաքանչյուր խնդիր լուծում է թիմային աշխատանքի միջոցով: Անմասն չի մնում նաև որակի ապահովման գործընթացը: Գործընթացին առնչվող բոլոր իրավանորմատիվային փաստաթղթերը, գործիքները հասանելի են ՀՖԿՍՊԻ-ի կառուցվածքային բոլոր ստորաբաժանումների ներկայացուցիչների դիտարկմանը, ուսումնասիրմանը և հետադարձ կապի ապահովմանը, որն էլ ստեղծում է որակի ապահովման նկատմամբ գործընկերային և թիմային մոտեցման մթնոլորտ:

ՀՖԿՍՊԻ-ն, համաձայն իր ռազմավարության և առաքելության ուղենիշների, այդ թվում՝ որակի ապահովման համակարգի ներդրման հետ կապված վերոնշյալ նպատակները և սկզբունքներն իրագործելու համար, պետք է.

✚ Կրթության, հետազոտական ծրագրերի և ուսանողներին տրամադրվող ծառայությունների բարելավման համար իրականացնի պարբերական մշտադիտարկումներ, ուսումնասիրություններ և վերլուծություններ՝ տրամադրելով փաստագրված տեղեկատվություն:

✚ Ստացված տեղեկատվությունը և վերլուծությունները պետք է ի հայտ բերեն ՀՖԿՍՊԻ-ի լավագույն փորձը և բացթողումները տարբեր մակարդակներում, որոնք կընդգրկվեն Ինստիտուտի կարճաժամկետ ծրագրերում՝ որպես բարելավմանն ուղղված միջոցառումներ:

✚ Իրականացնի հստակ նպատակային միջոցառումներ՝ Ինստիտուտում որակի մշակույթի ձևավորման և կատարելագործման համար: Մասնավորապես, ստեղծելով բարենպաստ միջավայր Ինստիտուտի վարչակազմի, պրոֆեսորադասախոսական, ուսումնասօժանդակ համակազմի և ուսանողների մասնագիտական զարգացման, դասավանդման և ուսուցման նորագույն հմտությունների և գիտելիքների ձեռքբերման համար:

✚ Արդիականացնի կառավարման և հաշվետվողականության թափանցիկ համակարգը, որտեղ ուսանողները, դասախոսները և վարչակազմը իրենց մասնագիտական տիրույթում կմասնակցեն որակի ապահովման գործընթացներին, կարծիքներ և

առաջարկություններ կտրամադրեն՝ որակի ընթացակարգերի և գործընթացների բարելավման նպատակով:

- ✚ Ներառի կառուցվածքային ստորաբաժանումները և ռեսուրսները որակի ապահովման գործընթացների անխոչընդոտ իրագործմանը և համակարգի բարելավմանը:

6. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ

Որակի ներքին ապահովումը գտնվում է ՀՖԿՍՊԻ-ի պրոֆեսորադասախոսական և վարչական համակազմի յուրաքանչյուր անդամի պատասխանատվության շրջանակներում և հանդիսանում է նրանց առօրյա գործունեության անբաժանելի մասը:

Ստորև ներկայացված է ՈԱ-ի ներքին կառավարման համակարգը:

- 1. ՀՖԿՍՊԻ-ի ռեկտոր.** պատասխանատու է որակի ապահովման ինստիտուտային սույն քաղաքականության իրագործման համար:
- 2. ՀՖԿՍՊԻ-ի գիտական խորհրդին կից գործող ՈԱ-ն հանձնաժողով.** պատասխանատու է ՈԱ-ն քաղաքականության և հայեցակարգի բարելավմանն ուղղված առաջարկների ուսումնասիրության, կանոնակարգային, ընթացակարգային, չափորոշիչ փաստաթղթերի և կրթական ծրագրերի վերանայման և ներդրման քննարկման ու գիտական խորհրդի հաստատմանը ներկայացնելու համար:
- 3. Որակի ապահովման բաժին.** պատասխանատու է ՈԱ-ն քաղաքականության և հայեցակարգի իրագործման, ՈԱ-ն գործընթացների, մշտադիտարկման, վերանայման և բարելավման համար: Բաժինը համագործակցում է ֆակուլտետային ՈԱ-ն հանձնաժողովների և ամբիոնների ՈԱ-ն պատասխանատուների հետ: Պատասխանատու է ինստիտուտի կառուցվածքային ստորաբաժանումներից տվյալների, հաշվետվությունների հավաքման և վերլուծության համար: Բաժինը վերլուծված տեղեկատվությունը համադրում է ռազմավարական խնդիրների հետ, ձևակերպում և ներկայացնում ՀՖԿՍՊԻ-ի ՈԱ-ն հանձնաժողովի քննարկմանը և հաստատմանը:
- 4. ՀՖԿՍՊԻ-ի ֆակուլտետային որակի ապահովման հանձնաժողովներ.** պատասխանատու են ֆակուլտետում, ամբիոններում ուսուցման որակի և գործող ծրագրերի վերահսկման ու մշտադիտարկման, նոր առարկայական ուսումնական ծրագրերի քննարկման, որակի ապահովման ոլորտում ինստիտուտում ընդունվող որոշումների հետևողական իրագործման և հսկողության համար: Ֆակուլտետային հանձնաժողովի նախագահը հաշվետու է ինստիտուտի ՈԱ-ն հանձնաժողովին:

5. **Ամբիոնային ՈԱ-ն պատասխանատու.** պատասխանատու է ամբիոնի մակարդակով որակի ապահովման, վերահսկման գործառույթների իրականացման և ամբիոնի կողմից առաջարկվող նոր ուսումնական ծրագրի ներդրման գործընթացի կազմակերպման համար, համագործակցում է Ինստիտուտի այլ կառուցվածքային ստորաբաժանումների հետ՝ տվյալների հավաքման և փոխանցման նպատակով: Հաշվետու է ֆակուլտետային ՈԱ-ն հանձնաժողովին:

**7. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԵՎ
ՆՐԱՆՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

1. Որակի ապահովման ՀՖԿՍՊԻ-ի քաղաքականությունը հաստատվում և նրանում փոփոխություններ կարող են կատարվել Ինստիտուտի Գիտական խորհրդի կողմից:
2. Որակի ապահովման ՀՖԿՍՊԻ-ի քաղաքականության փոփոխության առաջարկով կարող են հանդես գալ.

ա/ Ինստիտուտի ռեկտորը,

բ/ Գիտական խորհրդին կից գործող ՈԱ հանձնաժողովը,

գ/ Որակի ապահովման բաժնի ղեկավարը: